

ՀԱՐԻԿԱՄԵԱՅ ՅՈՒՅԵԼԵԱՆ



Ա.Մ.Ս.Ա.Թ.Ե.Ր.Թ.Ի

1843-1943



Հայ զրի կեանքին մէջ անհախընթաց յաղթանակ մը եւ Միջաղ-
դային Մամուլի պատմութեան համար նշանակելի դէպք մըն է
ԲԱԶՄԱՎԵՊի այս հարիւրամեակը:

Ազգային ոչ մէկ թերթ կամ օրագիր, եւ նոյնիսկ եւրոպական
հազուազիւտ թերթեր, այնքան երկար ժամանակ տեսած եւ դորձած
են զիմագրելով այլեւայլ գժուարութիւններու եւ ծառայած բարձր
գաղափարականի՝ ո'րքան ԲԱԶՄԱՎԵՊը։ Ու Հանդէսիս ներկայ հա-
տորին մէջ երբ ազգը կու տանք այժմէն անոր Ոսկեղէն Յորելեանին,
Խմբագրութիւնս հպարտ կը զգայ ներկայացնելով Հայ ազգի եւ
բովանդակ գիտական աշխարհի՝ Միսիթարեան Տան գրական բազմաճիւղ
գործունէութիւնը, նուիրուած մասնաւորապէս Հայ Մատենագրութեան
ու Լեզուին, Հայ Պատմութեան, Հայ Արուեստին, ծանօթացնելով
միանգամայն Եւրոպացիին՝ Հայկական կեանքն ու զեղարուեստը, եւ
փոխադարձ Եւրոպական գրականութեան ու արուեստին զեղեցկու-
թիւնները Հայ ժողովուրդին, մանաւանդ իր ԳԵՂՈՒՆԻ բացառիկ
թիւերու չքեզ է չերուն մէջ։

Աշխարհասահման պատերազմով ստեղծուած չարազէտ կացութիւնը
սակայն, չի թոյլատեր ո՛ եւ է ձեւի տակ տօնախմբելու այժմ
ԲԱԶՄԱՎԵՊի այս պանծալի գարադարձը, որուն անշուշտ արդար
նախանձախնդրութեամբ պիտի փափաքէին իրենց մասնակցութիւնը
բերել Հայ բազմաթիւ թերթերն ու օրագիրները, զանելով իրենց
Երիցազոյն Անդամի այդ փառաւորութեան եւ յաղթանակի տօնա-
խմբութեան մէջ՝ Հայ զրի ընդհանուր զնահատանքի եւ յաւերժացումին
հետ նաեւ իրենց գոյութեան անժխտելի ապացոյցը։

